

ՏԱԹԵՎ ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ՀԱՄԱԼԻՐ

**ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՎՈՂ ՈՒՍՈՒՑՉԻ
ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ**

Հետազոտության թեմա՝ Խմբային հետազոտական աշխատանքների կազմակերպումը
մաթեմատիկայի դասերին

Հետազոտող ուսուցիչ՝ Անահիտ Խնձրցյան

Երևանի Րաֆֆու անվան թիվ 36 հիմնական դպրոց

ԵՐԵՎԱՆ 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....	2
Խմբային հետազոտական աշխատանքների կազմակերպումը մաթեմատիկայի դասերին.....	4
Հետազոտական աշխատանք կատարելու պահանջները.....	5
Խմբային աշխատանքի արդյունավետությունը	6
Հետազոտական աշխատանքի փուլերը	7
Հետազոտական աշխատանքի առավելությունները.....	9
Հետազոտական աշխատանքի գնահատումն ըստ չափանիշների	10
Հետազոտական աշխատանքը, որպես միջառարկայական կապի արժեքային համակարգի ձևավորող.....	11
ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ.....	14
ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ	15
Հավելված.....	16

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ուսուցման գլխավոր նպատակներից մեկը գիտելիքը կիրառական դաշտ մտցնելն է, որտեղ հետաքրքրասեր սովորողը դառնում է մոտիվացված մտածողության կրողը:

ՍՈՎՈՐՈՒՄ ԵՆՔ ՍՈՎՈՐԵԼՈՎ

Աշակերտակենտրոն դասարանի աշակերտը դառնում է դասի նպատակային մասը իրականացնողը: Երբ աշակերտը ոչ միայն աշակերտ է, այլ նաև ուսուցիչ՝ միաժամանակ մնալով նաև դասընկեր: Ներկայացնում է իր ստացած գիտելիքները, ոչ միայն լուծելով, այլ նաև օգնում է ընկերոջը, թիմային աշխատանքի հոգեբանություն/, փոխադարձաբար ստուգում են կատարված աշխատանքները, գնահատում ու գնահատվում: Առկա է և՛ թիմային աշխատանք, և՛ անհատական աշխատանք, և՛ թիմային բազում էմոցիաներ....

Ի վերջո ուշադրության կենտրոնում աշակերտակենտրոն դասի առանձնահատուկ **ԱՇԱԿԵՐՏՆ** է, կարծում եմ արդեն իսկ ամեն ինչ պարզ է և հասկանալի: Ամենագրավիչ պահերից է պատասխանատվության զգացումը, ամենահուզական պահերից՝ ուսուցիչը դառնում է տվյալ դասարանի աշակերտ:

Այստեղ ուսուցիչը ստանձնում է մշակողի, համակարգողի, փորձագետի, խորհրդատուի դեր: Աշխատանքի հիմքում ընկած է սովորողի ճանաչողական հմտությունների, սեփական գիտելիքների ինքնուրույն ձևակերպելու, տեղեկատվական տարածքում կողմնորոշվելու, քննադատական և ստեղծագործական մտածողության ձևավորումն ու զարգացումը: Ցանկացած աշխատանքի հիմնական նպատակն է տարբեր կարողությունների ձևավորումը, որոնք ժամանակակից մանկավարժության մեջ անվանում են անձնային համալիր առանձնահատկություններ: Այն է՝ գիտելիքների, հմտությունների, արժեքների փոխկապակցում, ինչպես նաև համապատասխան իրավիճակում նպաստավոր պայմաններ հետևյալ կարողությունների ու հմտությունների ձևավորման և զարգացման համար:

1. Ռեֆլեկտիվ հմտություններ
2. Որոնողական, հետազոտական հմտություններ
3. Համագործակցային հմտություններ
4. Կառավարման կարողություններ, հմտություններ

5. Շնորհանդեսների պատրաստման հմտություններ

6. Աշխատանքի ներկայացման հմտություններ

Այս ամենը որոշակի քայլերի հաջորդականություն է, գիտելիքների համադրություն, որոնք իրականացվում են տրված առաջադրանքը կատարելու նպատակով՝ տարբեր առարկաներից գիտելիքների ինտեգրման միջոցով, յուրաքանչյուր սովորողի համար էական և որոշակի վերջնական արդյունքի տեսքով: Երբ մեկտեղվում են այս բոլոր դրույթները . **ԱՌԱՋԱԴՐՎԱԾ ՀԱՆՁՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՏԱՐՎԱԾ Է:**

Խմբային հետազոտական աշխատանքների կազմակերպումը մաթեմատիկայի դասերին

Կառուցողական մանկավարժությունն ընդհանուր հասկացություն է: Այն ոչ թե մեթոդ է, այլ մոտեցում, որը հիմնված է այն ենթադրության վրա, որ անհատն իր գիտելիքները ձևավորում (զարգացնում) է՝ ակտիվորեն մասնակցելով ճանաչողական գործընթացին: Այս մտավոր գործընթացի համար անհրաժեշտ է նաև, որ սովորողը համագործակցի մյուսների հետ: Պարզեցված և համակարգված ուսումնական ծրագիրը սովորողին չի կարող նման փորձառություն տալ, մինչդեռ իրական իրավիճակները կարող են:

Խիստ կարևոր է համընդգրկուն ուսումնական միջավայրի ստեղծումը: Տեղեկատվության աղբյուրն այլևս գրքերն ու ուսուցիչները չեն, այլ՝ իրական կյանքը: Խմբային աշխատանքի միջոցով սովորողները հնարավորություն ունեն իրական կյանքին նմանեցված իրավիճակներում որոնելու իրական խնդիրների լուծումներ՝ օգտագործելով տարբեր ձևեր և տարատեսակ եղանակներ: Կառուցողական մանկավարժության համար անհրաժեշտ են ուսման հատուկ պայմաններ, որոնք հնարավորություն կտան սովորողներին համագործակցելու և օգնություն ցուցաբերելու միմյանց: Նրանք կարող են օգտվել մի շարք գործիքներից և տեղեկատվության աղբյուրներից՝ իրենց խնդիրները լուծելու և նպատակին հասնելու համար:

Առաջադրանքը ոչ միայն խնդիրը լուծելը կամ այն ընտրելն է, այլև դրան իրական կյանքում սերտորեն փոխկապակցված հնարավորինս շատ հայեցակետեր բացահայտելն է: Յուրաքանչյուր նախագիծ յուրօրինակ և անվերջ է, քանի որ խնդիրները վերացական հասկացություններ չեն, այլ վերցված են իրականությունից:

Կարճաժամկետ (երկարաժամկետ) նախագծերում աշխատելիս սովորողները ձեռք են բերում նոր գիտելիքներ ու հմտություններ: Նրանք ստանում են այս կամ այն առաջադրանքը, ձևավորում խմբեր, ապա դասարանում և տանը՝ առկա, առցանց կերպով, կազմակերպում են հետազոտվող նյութի կատարման աշխատանքները: Որպես աշխատանքի ամփոփում՝ ներկայացնում են կոնկրետ արդյունքներ՝ տեսանյութ, աշխատանքի

ցուցադրություն, համակարգչային ծրագրի յուրացում, հետազոտության փորձ և այլն: Հետազոտական աշխատանքի կատարման ընթացքը վերահսկվում է դասավանդողի կողմից, ով առկա և առցանց հետևում և մասնակցում է այդ աշխատանքներին: Հետազոտական աշխատանք կատարելը հարմար է հատկապես նախագծեր իրականացնելիս, որովհետև որոշակի ժամանակ կա ուսումնասիրություն անելու:

Հետազոտական աշխատանք կատարելու պահանջները

Հետազոտությունն իրականացնելիս պիտի հստակեցվի նաև սովորողների հետազոտական աշխատանքին ներկայացվող պահանջները: Ահա դրանք.

- տեքստի վերլուծում, բովանդակության քննարկում, եզրակացության ձևակերպում
- ասված խոսքի հիմնավորում, ստեղծագործական մտածողության առկայություն
- կարդացած տեքստերի համադրում, դրանց տարբերությունների քննարկում, եզրակացություն-հետևություն անելու առնվազն փորձ:
- նախագծային աշխատանքը հետաքրքիր է նաև նրանով, որ ընդհանուր գործ կատարելիս սովորողներն էլ ավելի են մտերմանում, փորձում են օգտակար լինել իրար, ընկերանում են, իրար ուսումնասիրում-բացահայտում են, իրարից սովորում են, գնահատում են «ընկերություն» կոչվածը, հասկանում են դրա առավելությունները: Մի խոսքով՝ նախագծի վրա աշխատելու ընթացքում առավել ցայտուն են դառնում սովորողների ունակությունները:

Կրթության կազմակերպման խնդիրներից են՝ կրթական համայնքի ստեղծումը, սոցիալապես ակտիվ, ինքնակազմակերպվող խմբերի համակեցությունը Այդ խնդիրների լուծման լավագույն ճանապարհը խմբային աշխատանքն է, որտեղ դրսևորվում են խմբի անդամների անհատական առանձնահատկությունները, միաժամանակ ձևավորվում են խմբի անդամին հատուկ կարողություններ՝ համագործակցելու, դիմացինին լսելու, հարգելու, ընդհանուր որոշումներ կայացնելու: Խճանկարը համագործակցային ուսուցման մեթոդ է, որի կիրառության ժամանակ սովորողները խորամուխ են լինում ուսումնական նյութի որոշակի հատվածի,

որոշակի հիմնախնդիրների մեջ և դրանք ուսուցանում իրենց ընկերներին: Ուսուցիչն ինքը պիտի տիրապետի այդ կարողություններին, դառնա խմբի անդամներից մեկը, իր սաների հետ ստեղծի սոցիալական այնպիսի միջավայր, որ հետաքրքրի սովորողներին և խթանի նրանց ինքնուրույնությանը, նախաձեռնողականությանը, հետազոտելու ու ստեղծագործելու կարողությանը:

Խմբային աշխատանքի արդյունավետությունը

Խմբային աշխատանքն ավելի արդյունավետ է դարձնում ուսուցման գործընթացը: Լավ կազմակերպված խմբային աշխատանքը մեծապես ազդում է սովորողների անհատականության և արժեքային համակարգի ձևավորման վրա: Խմբային աշխատանքը խթանում է սովորողների՝

- համատեղ մտավոր աշխատանքը, որի ժամանակ քննարկումները դառնում են ուսուցման միջոց,
- կամքի ուժը՝ միասին ընդունած կանոններն ու որոշումները հարգելու համար, համագործակցությունը,
- փաստարկներ բերելու, դրանք մեկնաբանելու, հիմնավորելու ունակությունը,
- այլոց նկատմամբ հարգանքը,
- խմբի մաս լինելու գիտակցումը և խմբի հանդեպ պատասխանատվությունը:

Ինչպես արդեն նշվեց ուսումնական գործընթացի հաջող իրականացման համար ուսուցչին անհրաժեշտ են տարբեր մեթոդների իմացություն: Թեմայի ամփոփում դասերի ժամանակ փայլուն մեթոդ է ինտերակտիվ- խմբային աշխատանքների մեթոդը: Կարելի է կազմել համասեռ խմբեր, որի միջոցով հնարավոր է կազմակերպել շերտավորված ուսուցում կամ տարասեռ խմբեր, որի միջոցով թույլ աշակերտին կարելի է հասցնել միջին մակարդակի, միննույն ժամանակ՝ խթանելով միջին և ուժեղ աշակերտների ուսումնառության առաջընթացը:

Ստորև ներկայացրնում են իմ աշխատանքային գործունեության ընթացքում իրականացված խմբային-հետազոտական աշխատանքներից մի քանիսը՝

քննարկում, գործնական աշխատանք, մրցույթ-քննարկում, հետազոտական աշխատանք, խաղ:

Նախապես սովորողները բաժանվում են տարասեռ խմբերի: Խմբերից յուրաքանչյուրն ստանում է առանձին առաջադրանք: Աշխատանքի այս տեսակը սովորողների մոտ զարգացնում է խմբով աշխատելու կարողությունը, պատասխանատվության զգացումը, նպատակին հասնելու ձգտումը:

Այսպիսի խմբային աշխատանքի ժամանակ զարգանում են սովորողների խոսքը, մտածողությունը, ձեռքի աշխատանքները, մեղիահմտությունները: Խմբերի միջև առաջանում է առողջ մրցակցություն. յուրաքանչյուր խումբ փորձում է ամեն ինչ անել, որ իր աշխատանքն ավելի լավը լինի: Այս պարագայում աշխատանքները շատ հետաքրքիր ու բովանդակալից են դառնում: Այդպիսի խմբերում սովորողներն առավել մեծ ակտիվություն են դրսևորում:

Հետազոտական աշխատանքը սովորողին տալիս է մտածելու, հետազոտելու, սովորելու, ինքնուրույն աշխատելու հնարավորություն: Կատարվում է աշխատանքի բաժանում ըստ սովորողների ընդունակությունների, նախասիրությունների, մնում է խմբերում գտնել ճիշտ ուղղորդող, համակարգող սովորող, որն էլ կդառնա խմբի ավագը, ուղղակիորեն խիստ կարևոր է հնարավորինս պահպանել խմբերի ձևավորման տեխնիկան և սկզբունքները:

Հետազոտական աշխատանքի փուլերը

Խմբային ուսումնական հետազոտական նախագծային աշխատանքի **1-ին փուլ**. Մտեղծվում են աշխատանքային խմբեր: Տրվում է կոնկրետ թեմա: Նախագիծը իրականացնում են խմբով, անդամների միջև աշխատանքի բաժանում է լինում, խումբը ունենում է ղեկավար, որը նաև համակարգում է մյուսների աշխատանքը, համակարգչային ձևավորող՝ ով հավաքում է ամբողջական փաթեթը ներկայացնելու համար /կարող են ընտրվել մի քանիսը/:

Նախագծի կատարումը վերահսկելու համար կազմում են աշխատանքային ժամանակացույց՝ միջանկյալ արդյունքներով:

Կատարվում է աշխատանքի բաժանում և պլանավորվում հետագա քայլերը: Յուրաքանչյուր խումբ ստանում է իր թեման, ընտրում է ավագ, ստեղծում է իր տարբերանշանը և խումբը համախմբող կարգախոսն ու նշանաբանը:

2-ին փուլ. Խմբի անդամները դասագրքից, այլ գրականությունից, համացանցից փնտրում են խմբին առաջադրված թեմայով տարբեր տեղեկություններ, որոնք ընթերցում և քննարկում են խմբի ներսում:

3-րդ փուլ. Մշակում: Յուրաքանչյուր խումբ կարող է այդ մշակումը յուրովի կատարել՝ հանձնարարելով այդ աշխատանքը խմբի անդամներից որևէ մեկին կամ միասին աշխատել (վերջին տարբերակը նախընտրելի է): Արդյունավետ աշխատանքի արդյունքն այն է, որ սովորողներն ոչ միայն խմբագրական աշխատանք են կատարում, այլև իրենց կարդացած նյութերը վերլուծում, ընդհանրացնում են, որի շնորհիվ եզրակացություններ են գրում՝ շարադրելով սեփական կարծիքը: Այս աշխատանքը կատարվում է ֆորմալ համագործակցային խմբերով: Աշխատանքի այս փուլը պահանջում է ավելի շատ ինքնուրույնություն, կազմակերպվածություն, որովհետև ենթադրում է ստեղծագործական, մոտիվացված և հետազոտական աշխատանք:

4-րդ փուլ. Հավաքված և մշակված նյութերը խումբը պետք է ներկայացնի պաստառի, տեսանյութի, ռադիոնյութի կամ մեկ այլ ավելի հետաքրքիր մեդիաձևակերպման միջոցով: Աշխատանքի այս փուլում առավել չափով ի հայտ է գալիս նաև սովորողի մեդիագիտելիքների մակարդակը (ինչ ծրագրեր գիտի, ինչպես է օգտվում մեդագործիքներից, համացանցից, ինչպես է սպասարկում իր բլոգը և այլն), ինչպես նաև հետագայում թեման դառնում է առարկայական, տեսանելի և շոշափելի (ի նկատի ունեն օրինակ տարածական մարմինների պատրաստումը երկրաչափության գործնական դասերի ժամանակ, որևէ չափագրում,որի համար նախատեսված է հաշվել մակերեսը և պարագիծը և այլն):

Հետազոտական աշխատանքի առավելությունները

Այս աշխատանքի առավելություններն են.

- նպաստում է թիմային աշխատանքին՝ մարդուն դարձնելով հանդուրժող, ուրիշի կարծիքը հարգող, համբերատար:
- զարգանում է սովորողների պատասխանատվության զգացումը, միմյանց հաշվետու լինելու հատկությունը՝ խմբի ընդհանուր հաջողությունն ապահովելու համար:
- սովորողը գիտի, որ իր կատարած աշխատանքի համար միայն ինքը չի պատասխանատու և իր արած սխալը կամ բացթողումը կարող է խմբի աշխատանքի ձախողման պատճառ դառնալ, ուստի ավելի պատասխանատու է գործին մոտենում:
- բացառիկ կերպով նպաստում է սովորողի ինտելեկտի զարգացմանը, որի արդյունքում միջառարկայական կապը դառնում է խիստ տեսանելի և շոշափելի:

Իմ կողմից բազմիցս կազմակերպած նմանատիպ դասերի արդյունքում ես եկել եմ այն եզրահանգման, որ, հատկապես թեմայի ամփոփման դասերի ժամանակ, նմանատիպ գործնական, հետազոտական դասերը շատ արդյունավետ են և հետաքրքիր: Մեծանում է առարկայի նկատմամբ սովորողների հետաքրքրասիրությունը, շատ թեմաներ դառնում են ավելի դյուրին և հասկանալի, կիրառական: Ստեղծագործական մոտեցման արդյունքում գրվում են ոտանավորներ, ակրոստիքոսներ, հանելուկներ, կազմվում են խաչբառեր, խնդիրներ, որոնց արդյունքում աշակերտի միտքը դառնում է ճկուն, ստեղծագործ, թեման դառնում է ավելի ընկալելի, իսկ նշանաբաններն ու կարգախոսները դարձնում են սովորողին ավելի հայրենասեր և մարտական,ինքնաբավարարված,առաջադրանքի կատարման արդյունքում՝ ավելի վճռական:

ԺԱՄԱՆԱԿԻ ՊԱՀԱՆՋՆԵՐԻՑ մեկը՝ համակարգչային գիտելիքներ, համացանցից օգտվելու կարողություններ, անվտանգ համացանցից օգտվելու պատշաճ հմտություններ, ինտերակտիվ մոտիվացված մտածողություն-խմբային աշխատանքից կատարված դրական եզրահանգումներից ևս մի քանի տարատեսակ: Իսկ արդյունքը դառնում է առանձին նյութ, որը ներկայացնում է սովորողի թե՛ հմտությունները, թե՛ ինքնուրույնությունը և թե՛ մտածողությունը և հետագայում կարող է օգտագործվել ուսուցչի կողմից որպես դիդակտիկ նյութ: Ի միջի այլոց

հավելեմ, որ, որպես դիդակտիկ նյութ, ես յոթերորդ դասարանի երկրաչափության դասագրքի բոլոր թեմաների մասին գրել եմ ոտանավորներ և թեմային զուգահեռ անցնում եմ դասերի ժամանակ ,որի իմացությունը շատ է օգնում այս կամ այն թեման ավելի հեշտ հասկանալու համար.մեծանում է կիրառական դաշտը՝ դառնալով գործնական դասերի համար շոշափելի այլընտրանքային նյութ:

Բազմաբնույթ մեթոդների կիրառումը ուղղված է առանցքային գիտելիքի ձեռք բերմանը,մտածողության զարգացմանը, հետաքրքրությունների, հմտությունների, կարողությունների ձևավորմանը, իսկ երբ արդյունքում տեսնում ես սովորողի կողմից հստակ մտածելակերպի դրսևորում, հասկանում ես, որ սովորողը ձեռք է բերել պրպտուն միտք, մոտիվացված մտածողություն, երբ հասկանում ես, որ հասել ես քո առջև դրված նպատակին, մնում է կատարել եզրահանգում՝ աշխատանքը ստացվել է:

Հետազոտական աշխատանքի գնահատումն ըստ չափանիշների

Այստեղ շատ կարևոր է կատարված աշխատանքի ճիշտ ներկայացումը:

Սովորողը պիտի կարողանա ներկայանալ և ներկայացնել.

- համառոտ նկարագրել կատարված աշխատանքը՝ ինչ խնդիր են դրել, ինչու են ընտրել հենց այդ թեման, ինչպիսին է աշխատանքի արդյունքը, որն է նախագծի արդյունավետությունը.
- խոսել աշխատանքի ընթացքում ծագած դժվարությունների և աջակցությունների մասին. պետք է հիմնավորել՝ աշխատանքի ընթացքում ինչն են համարում անարդյունավետ, իսկ ինչը՝ օգտակար.
- վերաբերմունք արտահայտել՝ կոնկրետ ներկայացնողի համար որքանով է օգտակար այդ նախագծին մասնակցելը, ինչ սովորեց, ինչը ճշտեց, ինչ է կարողանում ավելի լավ անել աշխատանքը կատարելուց հետո, ինչը ինքը կկիրառի հետագայում:

Իրական հետազոտական աշխատանքի արդյունքում սովորողները ձեռքբերում պիտի ունենան՝ միասին ստեղծելով շոշափելի արդյունք: Առանձնահատուկ ուշադրության ենթակա է գնահատման պահը. այն պետք է

լինի օբյեկտիվ, վերլուծական սկզբունքով.այն է, յուրաքանչյուր խումբ, յուրաքանչյուր սովորող,պիտի հասկանալով ունենա ինքնագնահատական, ուսուցչի կողմից մեծ ջանքեր են պահանջվում օբյեկտիվ և սուբյեկտիվ գնահատական տալու համար: Գնահատումն էլ պետք է կատարել ըստ չափանիշների,որում կարևոր է հաշվի առնել հետևյալ չափանիշները:

1. Գիտելիք և ընկալում
2. Հարցում և վերլուծություն
3. Հաղորդակցություն
4. Ցուցադրական նյութեր
5. Ներկայացման հմտություններ

ԱՔՄԻՈՄ` Մաթեմատիկան մարզում է ուղեղը: Ուսուցողական խաղերը ճանաչողական մեծ դեր ունեն և կազմում են դասապրոցեսի բովանդակային նպատակներից մեկը, ամենաբուժիչ դեղահաբերն են ծուլացող ուղեղի համար:

ՄԱԹԵՄԱՏԻԿԱՆ ՄՏՔԻ ԹՌԻՉՔ Է, ԻՄԿ ԲՈՎԱՆԴԱԿԱՅԻՆ ԱՌՈՒՄՈՎ` ՆՊԱՏԱԿԻՆ ՀԱՍՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ԳԻՏԵԼԻՔ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔ:

Հետազոտական աշխատանքը, որպես միջառարկայական կապի արժեքային համակարգի ձևավորող

Խաղերը, խաղերգերը, հաշվերգերը, խաղիկները, խրախճանակները, խաղիկ-խնդուկները ժողովրդական բանահյուսության ստեղծագործություններ են և փոխանցվել են սերնդից սերունդ բերանացի կամ էլ երգերի միջոցով: Խաղիկների թեմաները բազմաթիվ են՝ սիրային, աշխատանքային, կենցաղային, օրորոցային և այլն:Միննույն խաղիկը հայկական տարբեր բնակավայրերում զանազան փոփոխությունների կարող էր ենթարկվել՝ կախված բարբառի առանձնահատկություններից: Բազմաթիվ խաղիկներ են գրառել Գարեգին Մրվանձտյանցը, Կոմիտասը, Մանուկ Աբեղյանն ու այլոք,իսկ Շիրակացու խրախճանակ-խնդիրները օգտագործվել են ուրախությունների ժամանակ ,տալիս են արժեքավոր տեղեկություններ հայ ժողովրդի ազատագրական շարժումների,

առևտրական հարաբերությունների, որսորդության, զինվորական կյանքի մասին
և այլն:

Հայկական ժողովրդական մի քանի խաղիկ խնդուկներն ավելի
հետաքրքիր և հուզական են դարձնում դասը, երբ տրամաբանորեն կապելով
թեման ստեղծագործական մտքի հետ ստացվում է մի յուրօրինակ աշխատանք:
Առանձնահատուկ կերպով պետք է նշել Շիրակացու
խնդիրները, խրախճանակաները: **Ճախարակն ու իլիկը ներկայացնում են
մարդու աշխատանքը՝ որպես երկրաչափական մարմիններ/ պտտական
մարմիններ/, գիրքը՝ ուսումը.....**

Սովորողը գիտակցում է ,որ ամեն լավ բանի մարդը հասնում է տքնաջան
աշխատանքի և գիտելիքի շնորհիվ:

Առանձնահատուկ ձևով ուզում եմ նշել մի քանի դասերից հատվածներ:

Թումանյանի հեքիաթների մաթեմատիկական մոդելը խորագրով
հետազոտական աշխատանքը ,առանձնահատուկ ձևով մոտիվացիայի աղբյուր
էր ,երբ սովորողները հեքիաթներից դուրս էին գրել չափման միավորները,
ինչպես նաև հավաստի և անհնար պատահույթները:

Ակնառու աշխատանք է կատարվել ճրդ դասարանում ,,,,
Բազմանկյունները եռագույն հարթության խճանկարում,, խորագիրը կրող
ճանաչողական դասը:

Թեման բազմանկյուններն են, արդյունքը՝ բազմանկյունների
վերադասավորության արդյունքում ՀՀ եռագույն դրոշմը:

Ցրդ դասարանում ,,Վեկտորներ,, թեմայից հետազոտական դասը.

Վերնագիր.Խորհուրդ խորին: Հայկական եկեղեցիների վեկտրական
ուրվագիծը,,

Սովորողը ընտրելով որևէ հայկական եկեղեցի՝ գմբեթի կամ պատերի
միջոցով կիրառել է վեկտորների գումարման երեք կանոնները:

ճրդ դասարանում

Տասնորդական կոտորակներ թեմայի ուսուցման ժամանակ, որպես
ֆինանսական բաղադրիչի ինտեգրում ներկայացվել է աշխարհի երկրների
դրամական միավորները:

Իզուր չեն ասում.ոչ հստակ մտքերի համար մաթեմատիկական սիմվոլներ չկան:Սովորողը պիտի հասկանա մաթեմատիկական լեզուն,ճանաչի այնտեղ տեղ գտած սիմվոլներին, նշաններին: Ֆինանսական բաղադրիչի ինտեգրումը շատ կարևոր պայման է ,սովորողը կարողանում է ընկալել մի քանի կարևոր դրույթներ:

Դրանցից են՝

Խնայողությունը որպես կյանքի որակի բարձրացման միջոց:

Խնայողությունը գործողությունների համակարգ է, որը հանգեցնում է ցանկացած ռեսուրսների չափավոր սպառմանը:

Ընտանեկան բյուջեն ամսական պլան է, որը կազմված է ըստ որոշակի ընտանիքի եկամտի մակարդակի:

Դասի նպատակն է՝Սովորեցնել կատարել խելամիտ գնումներ, որի արդյունքում կունենաա խնայողություններ:Ֆինանսական գրագիտությունը խթանելու նպատակով անհրաժեշտ է ձեռք բերել անձնական ֆինանսները կառավարելու բազային կարողություններ: ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԲԱՂԱԴՐԻՉԸ ԴԱՌՆՈՒՄ Է ԲԻԶՆԵՍ ԾՐԱԳՐԻ ԲԱՂԿԱՑՈՒՑԻՉ ՄԱՍ:

Ուզում եմ կարևորել նաև հետազոտական բացօթյա դասերի դերը մաթեմատիկայում:Ամեն տարվա վերջ մակերեսներ և պարագծեր թեմայից որպես կիրառական դաս ես իմ սաներին հանձնարարում եմ չափազրել Բաֆֆու արձանի հատակագիծը՝ պարագիծը և մակերեսը հաշվելու նպատակով:Դասը կրում է ՄԱՅՐԱՔԱՂԱՔԻ ՔԱՐԵ ՎԿԱՆԵՐԸ խորագիրը. ճանաչողական, կիրառական, հետազոտական խմբային աշխատանք:

Ամեն տարիք իր գույնն ունի,իր ժպիտը,ամեն մի դաս՝ մի նպատակ: Այդօրվա գույները մայրաքաղաքային են,ժպիտները՝ ջերմ, մանկական,իսկ ճանաչողական, գործնական դասը՝ մոտիվացիայի աղբյուր: Հաճելի երևանյան եռուզեռ, ավանդական դասը կազմակերպում եմ 4,5,6 դասարաններից որևէ մեկում:

Ճարտարապետական կառույցները դառնում են մակերեսների և պարագծերի հաշվման մոդելներ:Արդյունքում սովորողը ճանաչում է ճարտարապետին,իր ձեռքով կատարում է չափագրումներ և հաշվումներ:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ուսուցչի կողմից սովորողներին հանձնարարվող ինքնուրույն հետազոտական աշխատանքները նպաստում են սովորողի հետազոտական, ստեղծագործական, նախաձեռնողական, ինքնակազմակերպման, ժամանակի արդյունավետ կառավարման հմտությունների ձևավորմանը և հնարավորություն է տալիս նրան ինքնուրույն կամ մյուսների հետ համատեղ աշխատանքի շնորհիվ գործնականորեն կիրառել դասի ընթացքում ձեռք բերված տեսական գիտելիքները և դրսևորել իրողությունները քննադատաբար ուսումնասիրելու, վերլուծելու, ստեղծագործաբար ուսումնասիրելու, ստեղծագործական նորարար մոտեցումներ կիրառելու ունակություններ:

Կարևորելով ինքնուրույն հետազոտական աշխատանքների դերը սովորողների կարողությունների ձևավորման հարցում, անհրաժեշտ է մեծ ուշադրություն դարձնել այդ ուղղությամբ իրականացվող աշխատանքների՝ մեթոդապես ճիշտ կազմակերպմանը:

Կառուցողական- ճանաչողական դասերը նպաստում են սաների ուղեղի ակտիվ աշխատանքին, խթանում են խոսքի, երևակայության, մտածողության, տրամաբանության զարգացմանը:

Անհամբեր սպասում ես արդյունքին.....հայրենաշունչ դասերը ունեն գիտակցաբար ստեղծված մոտիվացիայի աղբյուր, որն էլ իր մեջ ամփոփում է մի մեծ ՍԵՐ:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Балаев А.А. Активные методы обучения. М., 2006.
2. Смолкин А.М. Методы активного обучения. М., 1991.
3. Анцибор М.М. Активные формы и методы обучения. Тула 2002
4. Выготский Л.С. Педагогическая психология.
5. <http://forum.armedu.am/forum.php> Ուսուցման ժամանակակից մեթոդներ՝ ԽԻԿ համակարգ
6. <https://hy.wikipedia.org/wiki/> Ուսուցման ակտիվ մեթոդներ
7. Բաժնու անվան թիվ 36 դպրոցի ֆեյսբուքյան էջ:

Հավելված







